ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ՝ ՋՈՒՐԸ ԳՑԻՐ...

# ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS, ՕԳՈՍՏՈՍ 2015, թիվ 29, БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՂԱՐԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԵՌԱՄՍՅԱ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ «ԱՐՓԵՆ» ԿԵՆՏՐՈՆՈՒՄ 20 ՏԱՐՈՒՄ ԱՐԴԵՆ ԾՆՎԵԼ Է 27 720 ԱՐՑԱԽՑԻ ԵՐԵԽԱ




**«Արփեն» կենտրոնի գործող տնօրինուհին՝ Լիլիթ Գալստյանը գրասենյակի մուտքի մոտ**

Արդեն տասնամյակներ են մեզ բաժանում այն պատմական և հիշարժան դեպքերից, երբ Արցախ աշխարհը ուղղեց իր կքած մեջքը և ի լուր աշխարհի հայտարարեց իր ընտրած ուղու՝ ազատ և անկախ պետություն կերտելու և արժանավայել ապրելու իր որոշումը: Այն ձեռք բերվեց մեր ժողովրդի համար ծանր գնով՝ մեր սուրբ նահատակների՝ հայրերի և որդիների, քույրերի և եղբայրների արյան գնով:

Հետպատերազմյան ծանր տարիներին Արցախում ծնվեց մի բացառիկ երևույթ. բազմաթիվ բարեգործական կազմակերպությունների կողքին մայրաքաղաք Ստեփանակերտում 1995 թ. դեկտեմբերի 8-ից սկսեց գործել «Արփեն» ծննդաբեր մայրերի կենտրոնը՝ հիմնադրված Քարոլան և Ջորջ Նաջարյանների կողմից: Ամերիկահայ բարերարների ազնիվ ցանկությունն էր օգնության ձեռք մեկնել պատերազմի արհավիրքներով անցած, արյունաքամ, բայց և դաժան փորձությունից հաղթանակով դուրս եկած ժողովրդին:

Կենտրոնի հիմնախնդիրն էր նպաստել Արցախում ծնելիության աճին և հնարավորին չափ օգնել արցախյան բազմազավակ ընտանիքներին՝ նրանց առօրյա հոգսերը, սոցիալական ծանր բեռը թեթևացնելով: Այն սկսեց գործել, երբ դեռևս չկային շենքային հարմարավետ պայմաններ: Հապաղել չէր կարելի. ծանր էին հիշողությունները, դառը՝ իրականությունը, հարազատներ կորցրած, սփոփանքի կարոտ մարդկանց հոգեվիճակը:

Կենտրոնը կոչվեց տիկին Քերոլան Նաջարյանի մոր՝ Արփենի անունով, և սա ուներ իր հիմնավորումը: Հատկանշական է, որ տիկին Արփենի ընտանիքը Մեծ եղեռնի դժնդակ տարիներին հարկադրված լքել էր տուն ու հայրենիք, մազապուրծ փախել էր թուրքական

յաթաղանից, հրաշքով փրկվել սպանդից և հաստատվել հեռավոր Ամերիկայում:

«Արփեն» ծննդաբեր մայրերի կենտրոնը, բացի հղի կանանց և ծննդաբեր մայրերին հագուստ և սնունդ տրամադրելուց, շատ կարճ ժամանակամիջոցում գրավեց երիտասարդ կանանց վստահությունը: Կատարելով յուրօրինակ առաքելություն՝ նա առաքում էր նաև համապատասխան պոլիվիտամիններ, գրականություն երեխաների նախածննդյան անհատական խնամքի, հետծննդյան շրջանի առանձնահատկությունների, ինչպես նաև կարևոր օղակ էր հղի կանանց և ծննդատան միջև: Չէ՞ որ պատերազմական տարիներին հղի կանայք զրկված էին բժշկական հսկողությունից: Իսկ այժմ կանոնավորապես ամեն ամիս այցելում էին բժշկի և հետևում իրենց ապագա երեխայի զարգացմանը: Դրան նպաստում էին նաև «Արփեն» կենտրոնի տրամադրած պոլիվիտամինային միջոցները:

«Արփեն» կենտրոնի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1996 թ. մայիսին: Հղի կանայք և ծննդաբեր մայրերը օգնություն էին ստանում արդեն բարեկարգ, վերանորոգված, քաղաքի կենտրոնում՝ Ազատամարտիկների փող. 43 շենքում տեղակայված գրասենյակից:

«Արփեն» կենտրոնն աստիճանաբար հնարավորություն ստացավ ընդլայնելու իր գործունեության ոլորտները: Արդեն օգնություն էին ստանում Արցախի հինգ շրջկենտրոնների հղի կանայք, ընդ որում՝ բազմազավակ մայրերը՝ կրկնակի բաժնով: Առանձին ծրագրեր սկսեցին գործել երկկողմանի որբ երեխաների՝ մինչև 18 տարեկաններին և արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամներին օգնություն ցուցաբերելու համար: Կենտրոնը այս բոլոր տարիներին սերտ համագործակցում է Արցախի զոհված ազատամարտիկների հարազատների միության և անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հետ:

Արդեն 10 տարի հանդիսավորությամբ նշվում է «Արփեն» կենտրոնի բացման պաշտոնական տարեդարձը: Հրավիրվում էին 1995 թ. առաջին օգնություն ստացած ծննդաբեր մայրերը իրենց երեխաներով: Չէ՞ որ այդ երեխաները «Արփեն»-ի տարեկիցներն են:

Հանդիպումների ժամանակ տիրում էր ջերմ, բարի մթնոլորտ, որտեղ երիտասարդ մայրերը կիսում են իրենց տպավորությունները, հայտնում իրենց գոհունակությունը «Արփեն» կենտրոնի աշխատանքից և, իհարկե, երախտագիտությունը կենտրոնի հիմնադիրներին՝ տեր և տիկին Նաջարյաններին: Փոքրիկները ստանում էին նվերներ:

Արցախում «Արփեն» ծննդաբեր մայրերի կենտրոնը բացառիկ կարևոր երևույթ է և՛ իր գործունեությամբ, և՛ իր երկարակեցությամբ, և՛ հասարակության ժողովրդագրական ազգային դիմագծի կայունացմանը նպաստող իր առաքելությամբ:

Կենտրոնը այժմ էլ իր ուրույն տեղն ունի Արցախի ժողովրդի կյանքի բարելավման գործում: Փոխվել է նրա ուղղվածությունը՝ կենտրոնը այժմ օգնություն է հատկացնում իրենց չորրորդ մանկիկին սպասող մայրերին:

Վերջին 10 տարիներին «Արփեն» կենտրոնը իր աշխատանքները կարողանում է շարունակել Արցախի բնակչության սերն ու հարգանքը վայելող, Արցախի մեծ բարեկամ ու բարերար Գուրգեն Մելիքյանի աջակցության շնորհիվ: Պատերազմի ամենածանր պահերին էլ այդ ազգանվեր հայորդին նշանակալի դերակատարություն է ունեցել մեր հաղթանակի մեջ: Իսկ հետպատերազմյա ծանր շրջանից մինչև այսօր նրա ղեկավարությամբ գործող «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» միշտ ժողովրդի կողքին է և անգնահատելի դեր ունի Արցախի հազարավոր ընտանիքների կայացման ու բարգավաճման գործում:

Շուրջ քսանամյա գործունեության ընթացքում «Արփեն» կենտրոնից օգնություն են ստացել 29 600 մայրեր՝ հղիության վերջին 6 ամիսների ընթացքում: Կենտրոնի հոգածությամբ լույս աշխարհ են եկել 27 720 երեխաներ՝ ազատ և անկախ Արցախի լիիրավ քաղաքացիներ:

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏՅԱՆ
«Արփեն» ծննդաբեր մայրերի
կենտրոնի տնօրինուհի
*Ստեփանակերտ*

***Մեր բարեգործները***

**ԿԱՏՅԱ ՔՈՒՇԵՐՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի 1968 թ. շրջանավարտ Կատյա (Եկատերինա) Քուշերյանն այժմ բնակվում է ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսի Գլենդել քաղաքում:

Հայոց Ցեղասպանության 100-ամյակի առթիվ նա որպես ուխտավոր նա այցելել էր Հայաստան և Արցախ: Հաճելի զրուցակից է նա, մեր գրականությանն ու մշակույթին քաջ գիտակ:

Նրա հետ ունեցանք մի բովանդակալից հարցազրույց, որի համառոտ տարբերակը սիրով ներկայացնում ենք մեր թերթի ընթերցողներին:

**ԽՄԲ.- Տիկի՛ն Քուշերյան, ի՞նչն է հատկապես այս օրերին Ձեզ բերել Հայաստան. եթե գաղտնիք չէ, խնդրում եմ՝ պարզեք Ձեր այցելության նպատակը:**

*Կ.. Ք. —Սիրով: Այս օրերին, ամբողջ այս տարում եւ նրանից հետո էլ ամեն հայ պարտավոր է հիշել միլիոնավոր անմեղ նահատակներին ու նրանց հանդեպ իր հարգանքի տուրքը մատուցել որեւէ եղանակով:*

*Ես գերադասեցի Հայաստան ուխտագնացությունը:*

*Գաղտնիք չէ, որ ամեն հայ այդ մեծ ողբերգության յուրօրինակ կրողն է՝ լինի Հայաստանում թե արտերկ-*

րում: Ես Ցեղասպանությունից հրաշքով փրկված, Ամերիկայում ապաստանած ընտանիքի զավակ եմ եւ ողբերգությունն զգում ու ապրում եմ ամբողջ խորությամբ: Մայրս հմուտ դերձակ էր եւ Ամերիկայում զորուգիշեր աշխատել է: Այնտեղ 1918 թ. ձեռք բերած կարի մեքենան, որով կարողացել է մեր ընտանիքը պահել, նրան ուղեկցել է ամբողջ կյանքում: Հայրենադարձվելով նա Երեւանում կույրերի միավորման մշակույթի պալատում, Լենինական - Գյումրիում Սեւյանի անվ. մշակույթի տանը եւ այլուր այդ մեքենան է գործածել` ղեկավարելով կարի խմբակներ ու պատրաստելով վարպետ դերձակների սերունդներ: Նրա մահից հետո որոշեցի այդ մեքենան Հայաստան բերել:



Մեր զրուցակից Կատյա Քուշերյանը

Բայց ահա պրն Գուրգեն Մելիքյանը, որի հայեցի նկարագրով ու լայնախոհությամբ պարզապես հիացած եմ, ինձ խորհուրդ տվեց այդ մեքենան Արցախ տանել եւ դնել Շուշիի ազգագրական թանգարանում: Այդ առիթով էլ այցելեցի Արցախ` մեր պատմական հայրենիքի ազատագրված այդ հատվածը, այդ գեղեցիկ դրախտավայրը: Այդ հնարավորությունն ընձեռելու համար շնորհակալ եմ նրան ու Ձեր հիմնադրամին:

***ԽՄԲ.- Տիկի՛ն Քուշերյան, ի՞նչպես տեսաք Արցախն ու նրա մարդկանց, ո՞ր բնակավայրերում եղաք, ի՞նչ հոգեւոր ու պատմաճարտարապետական հուշարձաններ տեսաք:***

Կ.. Ք.- Ափսո՜ս, ժամանակը կարճ էր: Արցախն ամբողջությամբ տեսարժան վայր է. շատ վայրերում եղա, բայց շատ բան էլ մնաց հաջորդ այցելություններին: Շատ սիրեցի հատկապես Շուշին. ինչպես այն պատկերացնում էի, այդպես էլ կար: Հրաշալի ճարտարապետություն, ավերակներից հառնող երազային քաղաք, մշակութային օջախներ, նույնքան հրաշալի բարեկիրթ մարդիկ, առանց որոնց կամ շինություններն ու պատմամշակութային հուշարձանները արժեք չունեն, կամ էլ կդառնան իր տեսած ու հավանած ամեն, ամեն ինչ բռնազավթող թշնամու բաժին, ինչպես էին ազատագրվելուց առաջ:

Ուրեմն Արցախում այսօր հայ մարդն ամենամեծ կարեւորությունն ունի, այն պետք բնակեցնել ու զորեղացնել հայ մարդկանցով: Եթե պետական միջոցները բավարար չեն, ապա պետք օգտագործել տարբեր հիմնադրամների եւ անհատ բարերարների հնարավորությունները եւ ստեղծել հայրենի հողի ու ժողովրդի կուռ միասնություն:

Այս ճանապարհով պետք է հզորացնենք ու ընդարձակենք մեր հայրենիքը:

***ԽՄԲ.- «Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» հենց այդ նըպատակով էլ իրականացնում է մի շարք ծրագրեր` օգնություն կարիքավոր ընտանիքներին, հղի եւ ծննդաբեր մայրերին, անվճարունակ ուսանողներին, դպրոցներին, մանկապարտեզներին, գործում են նաեւ ԽՄԼ կովերի ու ծառատունկի ծրագրերը:***

***Դո՞ւք ինչպես եք գնահատում դրանք:***

Կ. .Ք. — Միայն դրական: Ոչ միայն պետք է Հայաստանում կամ արտերկրում հայ ժողովրդի մաս կամ մասնիկ լինել, այլև մասնակից լինել նման ձեռնարկումներին: Այցելությանս նպատակներից մեկն էլ հենց բարեգործական է: Ուխտավորի իմ համեստ հնարավորություններով ես Քաշաթաղի կարիքավոր բազմազավակ ընտանիքներին նվիրել եմ երկու կով և տնկել երկու ընկուզենի:

Գ. Մ.- Ների'ք` ստիպված եմ միջամտել. տիկին Քուշերյանը բանկի միջոցով նախապես մեկ կովի արժեք էր փոխանցել, բայց Արցախ այցելությունից հետո փոխանցել է նաև երկրորդ կովի արժեքը: Նվիրատվությունների ցուցակը ճշտելուց հետո պարզ կդառնա, թե այդ կովերը բազմազավակ ո՛ր ընտանիքներին են տրամադրվել:

***ԽՄԲ.- Տիկի՛ն Քուշերյան, հավատո՞ւմ եք ժողովրդական ասացվածքին, թե` ընկուզենի տնկողը նրա պտուղը չի վայելում:***

Կ. Ք.- Մեր իմաստուն ժողովուրդն այդ ասույթի մեջ երկու իմաստ է ներառել. մեկ` ընկուզենին ուշ է բերք տալիս, մյուսը` մարդը ծառը իր համար չի տնկում, այլ սերունդների:

***ԽՄԲ.- Ցեղասպանության 100-ամյակի այս օրերին, անմիջական տպավորությամբ, ինչպե՞ս եք գնահատում Հռոմի Ֆրանցիսկոս պապի խիզախությունն ու նրա վերաբերմունքը մեր ժողովրդի ողբերգության ու ստեղծած հոգեմտավոր ժառանգության եւ հատկապես Գրիգոր Նարեկացու նկատմամբ:***

Կ. Ք.- Հրաշալի: Խորին հարգանք ու խոնարհում կաթոլիկ աշխարհի հոգեւոր առաջնորդին արդարամտության ու խիզախության համար: Անշուշտ, Հայոց Ցեղասպանության դատապարտումը գնահատելի է որպես խղճի եւ արդարության հաղթանակի արտահայտություն, սակայն Գրիգոր Նարեկացուն արժանավորապես

Տիեզերական եկեղեցու երեսունմեկերորդ վարդապետ հռչակելը, այն էլ՝ «Մատյան ողբերգության» երկի նարեկյան բանաձեւումների վկայակոչումով, այն խորհուրդն ուներ, թե՝ տեսեք՝ թուրքերը ո՛ր ժողովրդին են եղեռնել ու հայրենազրկել:

***ԽՄԲ.- Տիկի՛ն Քուշերյան, Ամերիկայում ապրելով՝ ինչպե՞ս եք այսպես հրաշալի տիրապետում գրական արեւելահայերենին ու մեր գրականությանը:***

Կ. Ք.- Հպարտությամբ կարող եմ ասել, որ ես 1968 թ. ավարտել եմ հենց Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ուր ինձ դասավանդել են հիանալի հայագետներ՝ գրականագետներ ու լեզվաբաններ:

***ԽՄԲ.- Ձեր ուսուցիչներից հիմա ո՞ւմ եք հիշում:***

Կ. Ք.- Երանությամբ ու հաճախ հիշում եմ սիրելի Մկրտիչ Մկրյանին, որ մեզ սովորեցրեց գրական երկի գեղագիտական վերլուծության սկզբունքներն ու եղանակները, երկու էդվարդներին՝ Աղայանին ու Ջրբաշյանին, Գեւորգ Ջահուկյանին, Վազգեն Գեւորգյանին, որի դասախոսություններով ու մտերմիկ բացատրություններով սովորել եմ գրաբար, խորացել մեր մատենագրության մեջ, հասկացել Նարեկացու բարդ ու ըստ ամենայնի հարուստ աշխարհը: Ահա սրանք են նաեւ այն հոգեւոր ու մտավոր կռվանները, որոնք ի վերջո վերածվում են հայրենի հոգեմտավոր արժեքների հանդեպ սիրո եւ նվիրվածության:

***ԽՄԲ. – Փաստորեն մենք, առանց նախապես ծանոթ լինելու եւ Ձեր ներաշխարհին ինչ-որ չափով իմանալու, հաճելիորեն զրուցում էինք մասնագետ բանասերի հետ, որը միաժամանակ գիտակցում է ներկա պահին իր բարեգործական առաքելության էությունը: Եվ լավ էր, որ այս զրույցով բացահայտվեց հայոց մայր բուհի շրջանավարտի՝ սփյուռքահայ ազնիվ մտավորականի՝ հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ ճիշտ և օրինաչափ դիրքորոշումը:***

***Տիկի՛ն Քուշերյան, թույլ տվեք մեր ընթերցողների անունից շնորհակալություն հայտնել Ձեզ բովանդակալից հարցազրույցի համար եւ հաջողություն մաղթել Ձեր ազգանվեր գործունեության մեջ:***

***Հուսանք, որ Ձեր ուխտը կիսակատար չի մնա, եւ մենք կրկին հանդիպելու ենք Երեւանում կամ Արցախում, բայց ոչ թե ողբերգության տարելիցի, այլ մեր նոր ձեռքբերումներն ու հաղթանակները նշանավորելու առիթով:***

*«ԲԱՐԵԳՈՐԾ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

# ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**(սկիզբը՝ նախորդ համարներում)**

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈՒՄ

Հայտնում ենք բարեմիտ ընթերցողներին, որ մեր պարբերաթերթի նախորդ՝ 28-րդ համարում զուտ տեխնիկական պատճառներով սպրդել էր անցանկալի մի սխալ, որի համար հայցում ենք բոլորի ներողամտությունը:«Ստացված օգնությունններ» ցուցակում խառնվել են հերթական համարները եւ դուրս են մնացել շատ նվիրատուների անուններ: 26-27-րդ միացյալ համարում այդ ցուցակն ավարտվում էր 106 –րդ համարով. 28- րդ համարում այդ ցուցակը պիտի շարունակվեր 107 –րդ համարով, մինչդեռ սկսվել էր 218-ով:

Ստորեւ ներկայացնում ենք ճշգրտված ցուցակը:

| Հ/Հ | Ամսաթիվ | Անուն, ազգանուն | Նպատակը | Գումարը՝ դրամով |
|---|---|---|---|---|
| 107 | 01/12/2014 | Իսրայելյան Արթուր | Օգնության գրքերի ծրագրին Ա. Իսրայելյանի կողմից | 90 000 |
| 108 | 04/12/14 | COWANSVILLE HOLDINGS LIMITSD | CHARITY ISN 002581 OSN 024574 SSN 01175588 / RFB/ZD 81332TI3850868 – 9960 USD | 4 407 100 |
| 109 | 05/12/14 | EXOIL TRADING SA | CHARITY ISN 004385 OSN 029325 SSN 0204657 / RFB/ZD 81338TI6884275 – 9960 USD | 4 460 685 |
| 110 | 08/12/14 | Խաչատրյան Էդիկ | Tree project in the memory of the Vahagn Mahtesi Hakobiants. Edik & Julieta Khachatrian – 50 USD | 22 950 |
| 111 | 08/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ սիրելի Շահեն Գաբրիելյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |
| 112 | 08/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ Ռայա Մարտիրոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /05.12.14/ | 20 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 113 | 08/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ շատ սիրելի Լավրենտի Բարսեղյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /09.12.14/ | **20 000** |
| 114 | 20/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ Սոսի Իգնատյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /18.12.14/ | **20 000** |
| 115 | 20/12/14 | Արցախի ազգային վիճակախաղ ՓԲԸ | Վաճառված տոմսերի դիմաց | **64 000** |
| 116 | 23/12/14 | Սիմոնյան Արամ | Օգնություն Վլադիմիր Մանասյանից | **9 800** |
| 117 | 24/12/14 | Խաչատրյան Արտուշ | Փոխատվական գումարի վերադարձ | **200 000** |
| 118 | 27/12/14 | Կյուրեղյան Վարուժ | Օգնություն Վարուժ և Էմմա Կյուրեղյաններ – 1500 USD | **693 000** |
| 119 | 27/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ Սաքո Բաղդասարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | **20 000** |
| 120 | 27/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ Հասմիկ Սարոյանի /Տարաքչյանի/ հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.12.14/ | **20 000** |
| 121 | 29/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ մեր սիրելի Վարուժան Ծառուկյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /05.12.14/ | **20 000** |
| 122 | 29/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ Հաբեթ Սեդրակյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | **20 000** |
| 123 | 29/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ Գայանե Սարգսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | **20 000** |
| 124 | 29/12/14 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագրին՝ Սոսի Իգիթյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /18.12.14/ | **20 000** |
| 125 | 30/12/14 | Մոսոյան Սարգիս | Օգնություն ծառերի ծրագրին՝ բժիշկ Մոսոյան Սարգիս – 100 EUR | **58 000** |
| 126 | 12/01/2015 | SHANAZARIAN HENRIK SJUTOMTAVAGEN 15 B 756 46 UPPSALA | Tree project for Vahagn Mahtesi Hakobiants – 480 USD | **227 966** |
| 127 | 23/01/15 | Մելքոնյան Ռուբեն Հովհ. Ruben Melkonyan | Օգնություն | **70 000** |
| 128 | 10/02/15 | Պողոս Պետրոսյան | Օգնություն | **100 000** |
| **129** | **11/02/15** | Գուրգեն Մելիքյան | Օգնություն ծառերի ծրագրին՝ Լևոն Մովսեսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /11.02.15/ | **20 000** |
| **130** | **02/03/15** | Գուրգեն Մելիքյան | Օգնություն Rymond Sinani – 1 000 USD | **480 500** |
| **131** | **02/03/15** | Գուրգեն Մելիքյան | Օգնություն ծառերի ծրագրին՝ մեծ հայ Սեռոբ Սաղյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.01.15/ | **20 000** |
| **132** | **02/03/15** | Գուրգեն Մելիքյան | Օգնություն ծառերի ծրագրին՝ մեր անչափ սիրելի Անահիտ Քոչարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /14.01.15/ | **20 000** |
| **133** | **02/03/15** | Գուրգեն Մելիքյան | Օգնություն ծառերի ծրագրին՝ Աշոտ Քեխյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /10.01.15/ | **20 000** |
| 134 | 11/03/15 | Երևանի պետական համալսարան ՊՈԱԿ | ԵՊՀ 95-ամյակի հետ կապված միջոցառման կազմակերպման համար բարեգործություն | **750 000** |
| 135 | 18/03/15 | Գուրգեն Մելիքյան | Օգնություն ծառերի ծրագրին՝ Աշոտ Աբաջյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /17.03.15/ | 20 000 |
| 136 | 20/03/15 | Գուրգեն Մելիքյան | Օգնություն ծառերի ծրագրին՝ Աղանոր գյուղի բնակիչ 19.03.2015 թ. զոհված հայոց բանակի քաջարի զինվոր **Հակոբ Գագիկի Խաչատրյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 137 | 23/03/15 | Մելքոնյան Ռուբեն Հովի. Ruben Melkonyan | Օգնություն | 80 000 |
| 138 | 24/03/15 | GURGEN MELIKYAN MULTI-CHILDREN FAMILY FONDATION OF KHASHTAGH 330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91203_2324 | CAROLANN and GEORGE NAJARIAN DONTION for «ARPEN» center – 5 000 USD | 2 388 550 |
| 139 | 24/03/15 | Ե ՊՀ ՊՈԱԿ | Ֆինանսական աջակցություն | 1 300 000 |
| 140 | 08/04/15 | Քուշերյան Կատյա | Օգնություն ԽԵԱ ծրագիր – 500 USD | 237 075 |
| 141 | 08/04/15 | Քուշերյան Կատյա | Օգնություն Ծառերի ծրագիր՝ Կատրա և Վարդուհի Քուշերյանների կողմից – 300 USD | 142 245 |
| 142 | 08/04/15 | Սոսոյան Սարգիս | Օգնություն Ուսման ծրագիր – 200 USD | 102 938 |
| 143 | 09/04/15 | SHAHNAZARIAN HENRIK SJOTOMTAVAGEN 15 B 756 46 UPSALA | Transfer payment – 1480 USD | 702 985 |
| 144 | 15/04/15 | Քուշերյան Կատյա | ԽԵԱ ծրագիր Կատրա և Վարդուհի Քուշերյանների կողմից | 235 250 |
| 145 | 30/04/15 | Հակոբյանց Լիանա | Օգնություն Ծառերի ծրագիր Ռուբեն-Սասուն Մահդեսի-Հակոբյանս Ruben-Sasson Mahdessi-Hakobians | 90 000 |
| 146 | 04/05/15 | Մելքոնյան Ռուբեն Հովի. Melkonyan Ruben | Օգնություն | 80 000 |
| 147 | 05/05/15 | Հայաստանի Երիտասարդա-կան հիմնադրամ ՀՎՀՀ 02559042 | DRAM. HATK. PAYM. 74/2015, 27.04.2015 TSRAGIR VAHAN HAJRENIQIS | 200 000 |
| 148 | 05/05/15 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Ծառերի ծրագիր՝ մեր սիրելի Արման Փարսա-դանյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի (30/09/2014) | 20 000 |
| 149 | 07/05/15 | ԵՊՀ ՊՈԱԿ | Ֆինանսական օգնություն | 165 000 |
| 150 | 07/05/15 | Մահդեսի Հակոբյանց Սասուն | Օգնություն Վահագն Մահտեսի Հակոբյանց պուրակի հիմն. Assistans of Vahagn Mahdesi Hakobianc Memorial Park- 2000 € | 1 079 650 |
| 151 | 18/05/15 | ԵՊՀ արհ. կազմակերպություն | Դրամական օգնություն | 300 000 |
| 152 | 18/05/15 | Հակոբյան Ռայա | Օգնություն Ծառերի ծրագիր Վահագն Մահտեսի Հակոբ-յանի անվան պուրակին – 100 USD | 48 290 |
| 153 | 18/05/15 | Օհանյան Անի | Օգնություն Ծառերի ծրագիր Վահագն Մահտեսի Հակոբ-յանի անվան պուրակին – 100 USD | 48 290 |
| 154 | 18/05/15 | Օհանյան Նանե | Օգնություն Ծառերի ծրագիր Վահագն Մահտեսի Հակոբ-յանցի անվան պուրակին – 100 USD | 48 290 |
| 155 | 18/05/15 | Անդրեասս Սայեգ | Օգնություն Ծառերի ծրագիր Վահագն Մահտեսի Հակոբ-յանցի անվան պուրակին – 100 USD | 48 290 |
| 156 | 19/05/05 | Մինասյան Նարեկ | Օգն. Ծառերի ծրագիր. Tree Project՝ Nareg Minassian – 60 $ | 28 800 |
| 157 | 19/05/05 | Քէֆէեան Նեյթըն | Օգն. Ծառերի ծրագիր. Tree Project՝ Nathan Kefeyan -60 $ | 28 800 |
| 158 | 19/05/05 | Մահսերեսյան Նարինե | Օգն. Ծառերի ծրագիր. Tree Project՝ Narine Mahseresian -60 $ | 28 800 |
| 159 | 19/05/05 | Թինքճեան Ռօզ | Օգն. Ծառերի ծրագիր. Tree Project՝ Rose Thinkjian-60 $ | 28 800 |
| 160 | 19/05/05 | Փանոսյան Դալար | Օգն. Ծառերի ծրագիր. Tree Project՝ Talar Panossian -60 $ | 28 800 |
| 161 | 19/05/05 | Պելորեան Անի | Օգն. Ծառերի ծրագիր. Tree Project՝ Belorean Ani -60 $ | 28 800 |
| 162 | 19/05/05 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Ծառերի ծրագիր Ծառերի ծրագիր՝ Ասատրյան Հովհաննեսի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |
| 163 | 19/05/05 | Տոնիկյան Սոնա. արաբագի-տության ամբիոն | Օգնություն Ծառերի ծրագիր Ծառերի ծրագիր՝ Ասատրյան Հովհաննեսի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 164 | 21/05/15 | GURGEN MELIKYAN MULTI-CHILDREN FAMLY FOUNDATION OF KHASHATAGH 330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91 203-2324 | /REB/ 146524688//DONATION 501 C3 CURRENT TRANSFERS OTERSECTWRS- 4 000 $ | 1 912 400 |
| 165 | 29/05/15 | Պապյան Ստալիկ. Ֆուչիկի 1-ին նրբանցք, 1-40 | Օգնություն | 300 000 |
| 166 | 08/06/15 | Մելիքյան Գուրգեն | Օգն. Ծառերի ծրագիր՝ մեր սիրելի մայր Գաբրիելյան Լարիսայի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |
| 167 | 08/06/15 | Մելիքյան Գուրգեն | Օգն. Ծառերի ծրագիր՝ Զարեհ Մարտինի միջոցով 150 $ | 71 400 |
| 168 | 11/06/15 | GURGEN MELIKYAN MULTI-CHILDREN FAMLY FOUNDATION OF KHASHATAGH 330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91 203-2324 | /REB/ 146524688//DONATION 501 C3 CURR ENT TRANSFERS OTER SECTWRS- 4 000 $ | 1 908 480 |
| 169 | 15/06/15 | Մելքոնյան Ռուբեն RUBEN MELKONYAN | Օգնություն | 50 000 |
| 170 | 17/06/15 | Ղազարյան Պարույր Հեռ. 094 599 633 | Օգնություն | 25 000 |

Շարունակելի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» հայտարարում է մեծ մարդասեր, հայասեր ու հայաստանասեր, անվանի բժիշկ, Լոս Անջելեսի հայ գաղութի համայնքային կյանքի կազմակերպիչներից մեկի՝ «Անահիտ» հիմնադրամի բազմամյա նախագահի

## ՆԱԶԵԼԻ ՉԱՐՉՅԱՆԻ

անվան կրթաթոշակ միայն առաջավոր ուսանողուհիների համար:

Շոշափելի գումար ներկայացնող այդ կրթաթոշակը սահմանվում է թե՛ հանգուցյալ Ն. Չարչյանի հիշատակը հարգելու և հավերժացնելու և թե՛ ուսանող երիտասարդությանը համամարդկային վեհ գաղափարներով տոգորելու, ինչպես նաեւ նրանց խրախուսելու և ուսման պայմանները բարելավելու նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողուհիները, ովքեր ունեն ուսման բարձր առաջադիմություն և հույժ օրինակելի վարքագիծ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները հիմնադրամի հոգաբարձության խորհրդին դիմում են ներկայացնում նրա գործադիր տնօրեն պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի անունով:

Դիմումներն ընդունվում են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանի սենյակում մինչև 2015 թ. սեպտեմբերի 20-ը:

* * *

Բուհերի սանողներին տրամադրվելիք վարձավճարների դիմումներն ընդունվում են մինչև այս տարվա սեպտեմբերի 20 - ը:

Առաջնահերթությամբ ընդունվում են նախ՝ Քաշաթաղի շրջանի և Բերձոր քաղաքի ուսանող-ուսանողուհիների դիմումները, այնուհետև՝ հայկական բանակից զորացրված այն ուսանողներինը, ովքեր ծառայել են սահմանամերձ գոտու զորամասերում և եղել են դիրքապահ, ինչպես նաև՝ հաշմանդամ ազատամարտիկների զավակ ուսանողների, Արցախի ու Ջավախքի միակողմանի ծնողազուրկ ուսանողների դիմումները:

* * *

Հայտնում ենք մեր հիմնադրամի բարեգործներին ու համակիրներին, «Բարեգործ» պաշտոնաթերթի բոլոր ընթերցողներին, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» Արցախի Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում հայտարարում է

## ՀԻՇԱՏԱԿԻ ԾԱՌԱՏՈՒՆԿ

նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին և միլիոնավոր անմեղ զոհերին:

Ամեն ընտանիք կարող է ծառ տնկել նաև իր հանգուցյալների հիշատակին, ինչպես նաև՝ պսակադրության, զավակների կամ թոռների ծննդյան, նրանց արևշատության, մկրտության, տարեդարձի և այլ հիշարժան դեպքերի առիթներով:

Բերձորում ծառատունկ կարելի է կատարել ամեն տարվա մարտից նոյեմբեր: Ծառատունկ հնարավոր է կատարել նաև ամռանը, քանի որ արմատակալ ծառերը նախապես դրված են թիթեղյա թաղարների մեջ և հողով կարող են տեղադրվել նախատեսված պուրակում կամ առանձնացված այլ վայրում:

Ծառերի մասնագիտորեն էտումը, բուժումը, ժամանակին պարբերաբար ջրելը, խնամքը և պահպանությունը իրականացնում են Արցախի Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում բնակվող հմուտ այգեպանները, ովքեր ժամանակին Ձեր փոխարեն սիրով կկատարեն բոլոր անհրաժեշտ գյուղատնտեսական աշխատանքները:

Յուրաքանչյուր ծառի արժեքն է 100 ԱՄՆ դոլար, նրան համարժեք եվրո կամ ՀՀ դրամ:

Ցանկացողները կարող են գումարը փոխանցել ստորեւ նշված հաշվեհամարին՝ նշելով ծառի անվանատիրոջ լրիվ ու ճշգրիտ անունը, ազգանունը, հայրանունը եւ ծննդյան տարեթիվը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

FOR EURO TRANSFERS

| | |
|---|---|
| BENEFICIARY | **GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH** |
| TAX IDENTIFICATION NUMBER | **01533651** |
| ACCOUNT NUMBER | **2473800074730010** |
| BENEFICIARY'S BANK: | **ARDSHINBANK KASHATAGH BRANCH**<br>**SWIFT Code: ASHBAM22** |
| ADDRESS: | **13 G.LUSAVORICH St.,**<br>**Yerevan, ARMENIA** |
| *INTERMEDIARY BANK:* | **CORR.ACCOUT: 100-947721700**<br>**Deutsche BANK AG, Frankfurt am Main**<br>**SWIFT Code: DEUTDEFF** |
| TRANSFER DETAILS | **ASSISTANCE TO COW, TREE, STUDENT, BOOK PROGRAM** |

FOR USD TRANSFERS

| | |
|---|---|
| BENEFICIARY | **GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH** |
| TAX IDENTIFICATION NUMBER | **01533651** |
| ACCOUNT NUMBER | **2473800074730001** |
| BENEFICIARY'S BANK: | **ARDSHINBANK KASHATAGH BRANCH , ARMENIA**<br>**SWIFT Code: ASHBAM22** |
| ADDRESS: | **13 G.LUSAVORICH st.,**<br>**Yerevan, ARMENIA** |
| *INTERMEDIARY BANK:* | **Deutsche Bank Trust Company Americas**<br>60 Wall Street, New York, NY 10005<br>BKTRUS33 |
| TRANSFER DETAILS | **ASSISTANCE TO COW, TREE, STUDENT, BOOK PROGRAM** |

*Գումարի փոխանցման դեպքում խնդրում ենք տեղյակ պահել հետևյալ հասցեով*
*Republik of Armenia, Yerevan, Ave. MXITAR HERATSI, no. 16, apt 48, G. MELIKYAN.*
*Tel. (37410) 57-60-73*


***ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

***ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝***
***ԱՎԱԳՅԱՆ Ա, բ. գ. դ., պրոֆեսոր***
***ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ. գ. թ., պրոֆեսոր***
***ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ, պ. գ. թ., պրոֆեսոր***

*Համարի նյութերը , շարվածքը , լուսանկարները և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:*

*Տպաքանակը՝ 99:*
*Թերթը բաժանվում է անվճար:*

***Խմբագրության հասցեն՝***
*Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:*
***Հեռ.՝ 060 710 629, 055 – 52 - 29 – 36, 55 - 25 – 37, 52 - 29 – 36***